բարի էր և ամէն տեղէկ ու բարի գործի կը մասնակցէր։ Շատ մը չուասներու օգնած է. մանաւանդ գաղթականութեան ատեն։ Յարգուած էր թէ հայերէն և թէ օտարներէն։ Թաղումը մեծ շքով կատարուեր է։

—Բարիզէ մէջ հայ գեղարուեստասէրները երեկոյթ մը ունեցեր են ի նպաստ հայ որբերուն։ Երեկոյթը հովանաւորեր են ականաւոր ֆրանսացիներ. իսկ նախաձեռնողը եղած է Արշակ Զօպանեան։

—Վիէննայի հայերը «Անի» անունով ընկերութիւն մը հիմներ են, որուն գլխաւոր նպատակն է աղքատ հայ ուսանողներուն օգնել, հաւաքուելու տեղ մը ունենալ մայրենի լեզուով խօսելու և դասախօսութիւններ սարքելու համար.

—Դավրէժի հայերը 2200 ոսկի արժողութեամբ մեծ շէնք մը գըներ են, կեդրոնական դպրոցին համար։

Շէնքը Լիլավայ և Ղալայ հայ թաղերու ճիշդ մէջ տեղը կը գտնուի։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹՈՒՐՔԻԱ

Ֆիրմիլեանը օծելուն համար նոր դժուարութիւններ ծագելուն պատճառով Զինովիէֆ իր արձակուրդի ճամբորդութիւնը յետաձգեր է։

Յոյնաց պատրիարքարանը Զինովիէֆի պատասխանած է որ դեռ Երլտըզէն պաշտօնական յայտարարութիւն չէ ընդունած օծելու համար։

—Պոլսէն եւրոպական թերթերուն կը հաղորդեն որ Սուլթանի հրամանով յանձնախումբ մը կազմուած է Պոլսոյ հին պարիսպները վերանորոգելու համար։

Սուլթանը վախցեր է ոստիկանութեան նախարարի տուած տեղեկագրէն, որուն մէջ կըսուի թէ քաղաքի մէջ կը մտցուի սինամիտ, փամփուշտ ևն։

### ԱՆԳԼԻԱ

Էտուարտ թագաւորը իր ազգին ուղղած հրամանագիրի մը մէջ Հարաւային Աֆրիկայի պատերազմին դադրելուն առթիւ շնորհակալութիւն կը յայտնէ և կըսէ թէ հաշտութեան կնքումին հետեւանքով քիչ ատենէն անգլիական կայսրութեան կցուելիք տէրութիւններուն բարօրութիւնը վերահաստատելու յոյսը ունի։

—Անգլիական թերթերուն մեծ մասը Պօէրներուն դիւցազնական ընթացքի մասին յարգանքով և գովեստով կը խօսին։

—Լոնտոնի մէջ, Բրէթորիայէն հաշտութեան մասին եկած հեռագրին լուրը առնուելուն պէս լրագիրները յաւելուածներ հրատարակեր են. և ամէն կողմ ուրախութեան մեծ ցոյցեր կատարուեր են։

—Հաշտութիւնը տօնելու համար մեծ պատրաստութիւններ կը տեսնուին։

### ՖՐԱՆՍԱ

Վալտէկ—Ռուսօ նախարարութեան հրաժարականը յանձներ է Լուպէի։

Լուր կը պտտի որ նախարարութիւն կազմելը պիտի յանձնուի կամ Պրիսօնի կամ թէ Գոմպին։

Հին նախարարներէն Տէլքասէ, Լանըսան և Ժէնէրալ Անդրէ պիտի շարունակեն իրենց պաշտօնները։

### ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ցորը հրաւիրող պատգամաւորութիւնը արդէն ուղեւորեր է Ռուսիա։ Պատուիրակութեան մէջ են ազգային ժողովի նախագահ Պ. Պ. Տրական Ցանքով, և Նախարարապետ Դանէֆ։

—Պուլկար էքզարխը կրկին բողոքած է Ֆիրմիլեանի օծման դէմ և ծագելիք բարդութիւններու պատասխանատուութիւնը իր վրայէն նետած է։

## ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ“

Հաճի Բաճաֆօ
Ամառնային շրջան
«ՎԷՍԻԼՕ»
Հայ դերասանական խմբին
Այսօր շաբաթ «իշեր ժամը 9ին պիտի ներկայացուի՝

ՌՕՊԷՐԹ ՄԻԱԶԱԿԱՊԵՏ
կամ
ԱՆՄԵՂՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆԸ
Թատերախաղ 4 արարուած

⁂

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԳ
ՀՈՎԻՒՆ ՈՒ ՀՈՎՈՒՈՒՀԻՆ
Պ.Գ. Ցակոբեանի եւ Օր. Բօզաչիի կողմէ

⁂

ՊԱԼԷԴ
Օրիորդ Բաւաաֆօյի կողմանէ

⁂

## ԹՈՒՆԱՒՈՐ ԳԱՒԱԹԸ
Կատակախաղ 3 արար Պ. Պէնլեանի կողմէն

⁂

Վաղը կիւրակի գիշեր պիտի ներկայացուի՝
50,000 ՖՐԱՆՔԻ ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐԸ
Դրամ—Դոմէտի 5 արարուած
Խիստ ծիծաղաշարժ զաւեշտ մը


## ՄՕՏԵՐՍ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԷ

Ֆրանսայի նշանաւոր վիպասաններէն ՌԸՆԷ ՏԸ ՊՕՆ-ԺԷԻ հեղինակութիւնը եղող

# ԱՆԶՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

անուն խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպը։

Ամէն դասակարգի դիւրամատչելի ըլլալու համար, գիրքը մասամբ, 8ական երեսներէ բաղկացեալ, շաբաթը երկու թերթ պիտի հրատարակուի և իւրաքանչիւր 8ական երեսը պիտի ծախուի 5 սանթիմի։

Ամբողջ գիրքը 24-25 թերթէ պիտի բաղկանայ։

Վառնայի համար բաժանորդագին 1 Ֆր.։ Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի 1.20։

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ համար երեք թերթ մէկ ծրարով կը ղրկուին, իսկ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարի մէջ. փոստի ծախքը հրատարակչին վրայ է։

Դիմել հետեւեալ հասցէին՝ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ, ՎԱՌՆԱ։
Դրամի փոխարէն նամականիշ ալ կընդունուի։


### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—o—

«ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Աստղ Նարճեանի «Դիւցազնօրէնք» ի նպաստ Հայ Ուսանողական Միութեան։

Գինն է 1 լէֆ արծաթ։

Կը ծախուի նաեւ «Վարիչի Ազատութեան Ճանապարհին»։

Գինն է 90 սանթիմ

Վառնա

### ԱԶԴ

Մանուկ Տէր Մանուէլեան 55-60 տարեկան ալեւորական Վանի կաղնիկն Օզվանց գիւղացի, տարին մը է որ Սուլինայէն մեկնած է Ռումանիոյ Կրայիօվայ և Թուրնու-Մ-Ար-քէլ քաղաքները և անկէ ի վեր անյայտ եղած է, իրմէ տեղեկութիւն ունեցողներէ կը խնդրուի հաղորդել Սուլինա պրն. Մանուէլ Ցակոբեանին։

### ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուով այցետոմս, հասցէատոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագիր։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

### ՆՈԹԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Ֆիլիպէի Հայկ. Երգեցիկ խումբը պատրաստ ունի հետեւեալ քառաձայն երգերը։

«Մեր Հայրենիք», «Մայր Արաքսի» և «Զիմզլիմի Ֆաթէն կիտամ», «Լռեց ամպերը» (Կարա Մուրզա), «Ի մարտ—բաւ է որբանք», «Վրէժ—Թող կորնչին», մէկական երես 15 սանթիմ։

«Արիք Հայկազունք», «Ես լեսցի մի անուշ ձայն», և «Օյնա ղանչ—Ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) երկու քական երես 30 սանթիմ։

«Ռազմերգ - Հայ եղբայրները» 3 երես 45 սանթիմ։

«Դնացէք տեսէք ով է կրել չէծ» և «Լեփօ լէ լէ»—Ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) «Նախազան—բերին ամեն երես» 4ական երես 60ական սանթիմ։

Արտասահմանի համար մէկ երեսը 20 սանթիմ։

Ֆիլիպէ Հայկ. Երգ.—խումբ

Հասցէ
Ցակոբ Արմէնեան
(Ֆիլիպօլ)

### ՆԻՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ աշխատակցել ուզող ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Իւնիօն ստ Զ'Էդիւսիան Արմ.
l'Eorop r. sp l'Efol sp Tivl
Սուիս Ժընէվ
Կարգադիր Յանձնաժողով

## L'EUROPEEN

—o—

Շաբաթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, ընկերական հարցերու, գրական եւ գեղարուեստական։

Տարեկան 15 Ֆր.
Վեցամսեայ 8 Ֆր.
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

Դիմել կանխիկ

ՍԻՄՕՆ ՂԱԶԱՊԵՏ եւ Ընկ.
Ս. Փոփ. Դրիասողօ 5745
(Իտալիա) Վէնէտիկ

Ծանօթ.—Կը փութանք յայտնել ազնիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարակենք նաեւ մեծադիր բուստից, տասնեակ կարգ եւ ամենաստաքրական պատկեր մը, որ կը ներկայացնէ հոգեւոր ազգային գործիչներու ժողով մը։

Նոյն պատկերին լուսատիպ քարտերն եւս կը պատրաստենք։

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность“ — Варна